1. «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ինքնուրույն պահանջ չներկայացնող 3-րդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը) և «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1. Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը):

1.2. Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության նախարարի տեղակալի՝ 2026 թվականի մարտի 30-ի «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 217 որոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 80,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Հայցի ապահովման միջոցը, այն է՝ *«Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որևէ գործողություն, որը ուղղված է թիվ «ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1» ծածկագրով պայմանագրի ապահովման գումարը՝ 12,000,000 ՀՀ դրամը և որակավորման ապահովման գումարը՝ 23,870,771 ՀՀ դրամը, ինչպես նաև տույժը 1,312,892 ՀՀ դրամը և տուգանքը՝ 600,000 ՀՀ դրամը, գանձելու ուղղությամբ»*, պահպանել մինչև վճռի կատարումը, որից հետո՝ վերացնել:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ